

ՎՈՒՈՂՅԱ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ԿՅԱՆՔԻ ՆԱԽԱՇԵՄՈՒՆ*

*«Լուր ինձ, որդեակ, եւ ուսիր զՀանճար, եւ բանից
իմոց ո՛ւշ կալ սրտիւ քով: Յայտնեցից կչոռով զխրատ,
եւ ճշմարտութեամբ պատմեցից զՀանճար»:*

/ՍԻՐԱՔ ԺԶ 24-25/

Անցամ օրեր, և ես աստիճանաբար հաղթահարեցի իմ մերսում անփորձությունից կուտակված հոգեբանական արգելքը և մերվեցի մամկապարտեզի այդ մաքուր, ջիճջ, վճիտ ու սուրք մանուկների տարեբայնավարը հավաքախմբիմ:

Հստորդ երկու՝ հերթական ամառային արձակուրդներմ արդեմ ես մեծագույն ջերմագորովով, հաճույքով և ցնծությամբ անցկացրեցի Նորքի մանկական հիշյալ առողջարանում: Դեպի մուտք կյանքի նախաշեմիմ ես իմ մանկական դատողությամբ և վերլուծությամբ շատ բան հասկացա և ընկալեցի: Հասկացա, որ ինձ համար գիտակցված կյանքը դեռևս առջևում է, դեռևս մոր-մոր է սկսվում դեպի մրա մուտքը՝ անշուշտ, իհարկե, իր դժվարություններով և բարդություններով:

Անցավ այսպես ամիտ ու երջանիկ երկու տարի: Այս ընթացքում ես, շնորհիվ իմ հորեղբայր Վարազդատի, գրել և կարդալ սովորեցի, թվաբանական տարրական գիտելիքներ ձեռք բերեցի: Հորեղբայրս ինձանից թեև հիմգ-վեց տարի էր ավագ, սակայն մտ, իմ մանկական հասկացողությամբ և դատողությամբ, արդեմ բավականիմ գիտելիքների տեր պատանի էր: Ամբողջ օրը նա զբաղված էր դասերի սերտմամբ և զեղարվեստական գրքերի ընթերցանությամբ: Նա այդ հասակում այնքա՛ն մոլի ընթերցասեր էր, որ արդեմ ձեռք էր բերել մի համեստ գրադարան: Գրում էր բանաստեղծություններ, բայց որոնք, ցավոք սրտի, երբեք չտպագրվեցին: Բացի հանրակրթական դպրոց հաճախելուց և գիտելիքների ձեռքբերումից, հորեղբայրս միաժամանակ հաճախում էր երաժշտական դպրոց՝ քամանջայի դասերի: Նա համարյա ժամանակ չէր գտնում փողոց դուրս գալու և շրջապատի իր հասակակից երեխաների հետ խաղալու: Եթե այդպիսի առիթներ հայտնվում էին, ապա դրանք լինում էին շատ կարճ ժամանակով, որովհետև... հորեղբայրս շատ էր սիրում ինձ և չափազանց հոգատար էր իմ նկատմամբ: Չոր և տաք եղանակներիմ նա հաճախ ինձ տանում էր զբոսանքի, կինոդիտումների, տիկնիկային թատրոն և այլ մշակութային օջախներ: Իսկ ձմռան ամիսներիմ ինձ նույնիսկ ժամերով, սահմակի վրա նստեցրած, դուրս էր բերում փողոց և քարշ տայիս իր ետևից՝ առանց ձանձրույթի մշույլ անգամ ցուցաբերելու և հոգնությամբ դրսևորմամ:

* Առաջիմ մասը տե՛ս թիվ, թիվ Ը-Թ, էջ 170:

1936 թվականին ծնվեց մեր ընտանիքի ետխորհրդային շրջանի վերջին երեխան՝ կրտսեր քույրս՝ Աստղիկը, որի լույս աշխարհ գալով կրկին մեր հարկի տակ լավեցին մանկական անկառավարելի ճիչ ու լաց՝ իր հետ ամուրամալիորեն բերելով ընտանեկան հոգսաշատ, սակայն հեղեբուխ ցնծություն:

Այստեղ տեղին է Ռիչարտակել և մոռացության չտալ ու արժանին մատուցել մի բարի ու ազնիվ երիտասարդ կնոջ՝ հորաքրոջս, Քարմիլեի: Նա 1935 թվականին ամուսնացավ և ընդմիջտ հեռացավ իր հայրական օջախից, սակայն հետագայում մույնպես հոգով ու սրտով միջտ կապված մնաց մեզ հետ: 1936 թվականը մույնպես նշանակալից եղավ մրանց օջախի համար. ծնվեց մրանց միակ արու զավակը:

Մեր տանը համարյա բոլորը կարծես երաժիշտներ էին. Սաթենիկ տատս դալի էր խփում, հայրս, մայրս և ավագ քույրս երգում էին, հորեղբայրս քամանչա էր նվագում: Երաժշտարվեստի բնագավառում ապաշնորհը Գրիգոր պապս էր, որի ակնաջիծ հասու չէին երաժշտական ձայնաճիշմերի արտաբերած առիմքնող ելեէջները: Դե իսկ ես և կրտսեր քույրս էլ դեռևս հասու չէինք նրգարվեստի ներգործության մրերանգներին: Այնն օր, գրեթե առանց բացառության, մեր հարկի տակ լսելի էր երգ ու երաժշտություն՝ հիմնականում ազգային-ժողովրդական և զուսանակամ:

Ամուրամալիորեն չափազանց բարեպաշտ կին էր Սաթենիկ տատս: Այնն Աստուծո առավոտ, Արևը դեռ չծագած, արթնացնում էր ինձ՝ իր կիրակնօրյա անվերապահ ուղեկցին, հագցնում-կապցնում և իր հետ տանում էր կա՛մ Ս. Սարգիս, կա՛մ Ս. Աստվածածին եկեղեցի: Գնում էինք բացառապես ոտքով: Ս. Սարգիս եկեղեցի գնալիս ես հոգնություն չէի զգում, իսկ երբ գնում էինք Ս. Աստվածածին եկեղեցի, որ հաճախ լինում էր ամառային օրերին, նախքան զատիվերը սկսվելը՝ մենք մի տեղ համզատանում էինք և հետո միայն սկսում բարձրանալ: Զատիվերը բարձրանալիս ես կրկին չէի հոգնում, քանի որ ճանապարհն ինձ համար անասելի հետաքրքիր էր. այն անցնում էր ծուռուծուռ մեղիկ փողոցներով, փլված պարիսպների անանցանելի ճանապարհներով, մացառուտներով, կածաններով... Քայլում էի հպարտորեն և ոգեշնչված, որովհետև գնում էի սրբատեղի, գնում էի աղոթելու առ Աստված: Զգում էի, որ տատս մեծագույն բերկրամք էր ապրում՝ տեսնելով ինձ այդպես հպարտ և կենսուրախ:

Երբ տեղ էինք հասնում, մենք՝ տատս և ես, համբուրում էինք ավերակված եկեղեցու կիսաքանդ պարիսպները, որ առաջին հայացքից աչքի էին զարնվում իրենց այրված մոմերով պատված վեմ-քարերով: Հաճախ պատահում էր, որ այնտեղ մույնիսկ ծիսակատար քահանա էլ չէր լինում, որ անհարիր էր և անմեկնելի սրբատեղիի համար...



Ամառային մի շոգ օր, օգոստոս ամսին, վաղ առավոտյան, տատս ինձ արթնացրեց քմից, լվացվեցի, բոլորովին մոր շորեր հագա, որոնք, իհարկե, բծախնդրորեն արդուկված էին, և, փոքր ու համեստ նախաճաշից հետո, ձեռքիցս բռնած դուրս եկանք տանից: Ես արդեն նախապես գիտեի, թե ուր ենք գնում:

Գճում էինք Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոց: Ընողներս որոշել էին ինձ երաժշտական կրթության տալու: Ես չափազանց ուրախ էի այդ բանի համար: Վերջապես ես էլ կանդամագրվեի մեր ընտանեկան «երաժշտական ինստիտուտին»: Բայց ինձ համար այդ ամենն առայժմ մշուշոտ էր, անորոշ, հեռանկարային: Ես դեռևս պատկերացում անգամ չունեի ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների՝ կառուցվածքի և դրվածքի մասին՝ լինի դա համրակրթական, թե երաժշտական-կրթական:

Մեծք, անցնելով ինձ համար անծանոթ փողոցներով և մի թվացյալ գետափով, տեղ հասանք: Տեղ հասնելուն պես, երբ կանգ առանք մի շենքի շքամուտքի մոտ, տատս խրատական տոնով դիմեց ինձ.

- Ահա է՛ն հաստատություն, որով տու պիտի անցնես քյո կյանքի մայրուղին:

Ես իհարկե ոչինչ չհասկացա տատիս ասածից, միայն ընթոնեցի, որ ճախորհմաստ մի բան ասաց:

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը մեկ հարկանի ուղղանկյուն մի ընդարձակ շինություն էր: Ծքամուտքը հարավարևմտյան անկյունային մասից էր, որի առջև կար մի ընդարձակ հարթակ, գետնից շուրջ մեկուկես մետր բարձր՝ եզերապատված գեղեցիկ բազրիքով: Օինակառույցի արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ ճակատային մասերում դասարանները և լսարաններն էին, իսկ արևելյան և հյուսիսային ճակատային մասերը, շուրջ 7×15 մ, դպրոցի դահլիճ-համերգասրահն էր: Բոլոր դասարանների և լսարանների դռները կաշեպատ էին՝ ձայնամեկուսացման համար: Դպրոցի ողջ հատակը մանրատախտակյա էր:

Եվ այսպես, երբ ներս մտանք դպրոցի շքամուտքից, ինձ համար կարծես բացվեց կյանքի մի նոր աշխարհ: Ես շփոթված կանգ առա: Ընդարձակ միջանցքում արդեն հավաքվել էին բազմաթիվ երեխաներ՝ իրենց ծնողների հետ: Երբ ես կանգ առա, տատս նկատեց իմ շփոթվածությունը և խրախուսելու համար դիմեց ինձ.

- Բաղես, համարցակ էի, իստնք փոխոր քյո ապաքա դասընկերներն են:

Ես, կարծես խրախուսված տատիս խոսքերից, մի փոքր փարատեցի շփոթմունքս, բայց, սակայն, ինքնաբերաբար առաջ շարժվեցի: Մեծք ևս խառնվեցինք հավաքվածների բազմությանը: Բոլորի, մեծ թե փոքր, ուշադրությունը տնօրենի առանձնասենյակի մուտքն էր: Հենց այդ փակ դռան ետևում պետք է վճռվեր մեր՝ փոքրերիս կյանքի հետագա ընթացքի իրադարձային երազանքները:

Փոքր ժամանակ անց տնօրենի առանձնասենյակի դուռը բացվեց և դուրս եկավ մի գեղեցիկ երիտասարդ կին ու բարձրաձայն հայտարարեց.

- Երեխաներին ազգանուններով առանձին-առանձին ներս կկանչենք, իսկ ծնողները մնան դրսում:

Ակսվեցին ընդունելության քննությունները, որով և իրականության մեջ կարծես սկիզբ դրվեցին մեր՝ երեխաներիս ճակատագրին ընդառաջ, դեպի կյանք առաջնորդող առաջին ճախաքայլերը: Մեկիկ-մեկիկ երեխաները մերս էին մտնում ինձ համար այդ հրաշք դռնից և դուրս գալիս, բայց առանց գիտակցելու, նույնիսկ առանց կռահելու իրենց կատարած կյանքի այդ առաջին քայլերի էությունն ու նշանակությունը:

Երբ հերթն ինձ հասավ, և իմ ազգամուկը կարդացին, ես ամհամարձակ, վարամուտ, վախվորած մի քանի քայլ արեցի, իհարկե ջանադիր հրահրությամբ իմ տատի, և կանգնեցի ուղղակի դռան շեմին: Այլևս համարձակություն չունեցա ատաջ շարժվելու: Դիմացի սեղանի մոտ նստած էին մի հաղթանդամ պատկառազդու տղամարդ և երկու միջահասակ հաճելի տեսքով կանայք՝ տղամարդու աջ և հայակ կողմերում: Երբ ես շփոթված կանգնել էի շեմին, տղամարդը փաղաքջամեղով դիմեց ինձ.

- Ներս եկ, բալիկ ջան, մի ամաչիր, մոտեցիր սեղանին:

Երբ ես մոտեցա նրանց, նույն այդ տղամարդը շարունակեց.

- Անուկդ ի՞նչ է, տղաս:

Ես անտխածորեմ, գլուխս կախ, մի կերպ արտաբերեցի.

- Մորադ:

- Բանի՞ տարեկան ես, - շարունակեց նա:

- Յոթ, - հագիվ-հագ, մի կերպ կմկմալով պատասխանեցի ես:

- Ծատ բարի, - մտասևեռու՞մ հայացքով զննելով ինձ, կարծես ինքնաբերաբար արտաբերեց տղամարդը: - Դե հիմա խիստ ուշադիր եղիր և կատարիր այն, ինչ կառաջարկեմք մե՞նք:

Այնուհետև այդ նույն տղամարդը տարբեր տոնայնությամբ և զանազանիչ տակտերով երաժշտական կապակցված ձայներ արտաբերեց և պահանջեց նույնությամբ վերակրկնել: Ես անթերի կերպով կատարեցի նրա հանձնարարությունը՝ պահպանելով իհարկե նաև արտաբերված ձայների տակտային տևողությունները: Առաջարկեցին նաև երգային տողեր, որոնք նույնպես անթերի կատարեցի: Ապա աջ կողմի նստած կինը տարբեր տակտային ծափեր զարկեց: Ես կրկին անթերի վերակրկնեցի: Մի փոքր դադար տեղի ունեցավ, որից հետո երեքն էլ գոհունակությամբ միմյանց նայեցին, որով ինձ թվաց, թե նս արդարացրել եմ ինձ: Այնուհետև տղամարդը, ձայնի՞ն գոհունակ երանգ տալով, դիմեց ինձ.

- Ապրե՛ս, շա՛տ ապրես, բալիկ ջան, մե՞նք գոհ ենք, կարող ես գնալ:

Երեխաներին ներս հրավիրող կինը դուռը բաց արեց, և ես դուրս եկա: Երբ դուրս եկա, քրտիքը վրայիցս ծորում էր: Տատս վաղուց արդեն ամհամբեր ինձ էր սպասում: Նրա այն հարցին, թե ես ինչպե՞ս հանձնեցի քննությունը, ես չտիրապետելով ինձ, մանկական հավասարակշիռ դատողությունս կորցրած, քնազորեմ արտաբերեցի.

- Եսի՛մ...

Միայն թե ինձ դուրս ուղեկցող կինը դեմքի գոհունակ արտահայտությամբ մի թոռցիկ հայացք նետեց տատիս, ինձ համար ամհասկանալի ձեռքի մի շարժում արեց, որ հավանաբար կնշանակեր՝ ամեն ինչ բարեհաջող է:

Մի քանի օր հետո տատս կրկին այցելեց երաժշտական դպրոց՝ տեղեկանալու քննության արդյունքների մասին: Ես ամհամբեր սպասումի մեջ էի. ինչպե՞ս էին անցել քննությունները... Ժամանակ անց երբ տատս տուն վերադարձավ, ամիջապես ինձ իր մոտ կանչեց և երկարատև ու ջերմագին համարյուրներ դրոշմեց իմ այտերին, որից ես կռահեցի, որ ամեն ինչ հաջող է, ես դրականորեն եմ հանձնել քննությունները: Ծնողներին, հատկապես տատիս համեստ երազանքը իրականություն էր դարձել:

Ես արդեն ընդունվել էի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի մախապատրաստական դասարան: Ի մշամավորումն այդ «մեծ իրադարձության», հենց այդ օրն իսկ պապիս՝ Աբրահամյանների հարկի տակ տեղի ունեցավ «ճոխ համերգ»՝ մասնակցությամբ մեր ընտանեկան «երաժշտական համույթի»: Այդ երեկո իմն համար անսպասելի մի իրողություն տեղի ունեցավ: Ընտանեկան այդ «մշակությանի միջոցառմանը», ի զարմանս, ի ցնծություն և հուրախություն մեզ քոլորիս, իր եռամիսում մասնակցությունը քերեց նաև Գրիգոր պապս՝ «Դլե յաման» երգի սրտայի և հուզառատ կատարումով: Բոլորս զարմացած էինք: Այդ ինչպե՞ս եղավ, որ երաժշտական լսողությունից զուրկ այդ անձը այդպես առիճքոն ձայնով կատարեց մի երգ, որը, ցավոք սրտի, համայն հայության ողբերգական կյանքի ճակատագրորեն անբաժանելի ուղեկիցն էր: Ես մնացել էի զարմացած: Ուրեմն իմ տպավորություններն ու կարծիքը համոզեալ պապս անհամոզելիորեն սխալ էին: Պապս անառարկելիորեն ուներ մուրք և զգայուն հոգի, մի երևույթ, որն իմն համար անսպասելի հայտնություն եղավ: Ուրեմն Գրիգոր պապիս մտախոհությունն ու լռակյացությունն ուներ իր հիմնավոր և անուրամալի արմատները: Ես միայն հիմա եմ հասկանում, թե ինչու էր այդպես: Ուրեմն Մեծ գաղթից հետո ընկած երկու տասնամյակների կյանքի դառնություններն էին օրան այդպիսին դարձրել, այդ տարիների դառը հիշողությունները, որը բարեբախտաբար այդ երեկո երևի թե փարատվեց, իսպառ վերացավ: Ես չափազանց ուրախ էի այդ բանի համար:



Վերջապես եկավ շատ բաղձալի սեպտեմբերի 1-ը: Ես վաղուց և անհամբեր սպասում էի այդ օրվան: Այդ օրը իմն համար լինելու էր առաջին և արտասովոր խորհրդալի ուսումնական տարեշրջանը, իսկ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի համար՝ սովորական, հերթական ուսումնական տարեշրջանի սկիզբ: Այդ օրը մեծ, կարծես տոնական նոտագետ էր տիրելու ողջ Երևան քաղաքում: Սկսվելու էր աշակերտների և ուսանողների աշխույժ հոսքը քաղաքի փողոցներով, որը գործվանքի և հպարտության անչափելի զգացումով էր լցնելու նրանց ծնողների հոգիները: Իմն համար դեռևս ամսովոր էր և անհասանելի իմ մերաշխարհին այդ օրվա իրադարձային խորհուրդը, քանի որ ես առաջին անգամն էի ապրում այդ արտասովոր երևույթը:

Վերջապես, երկա՛ր սպասումից հետո, իրողություն դարձավ այդ երանելի օրվա առավոտը:

Վաղ առավոտյան տատս կրկին իմն քմից հանեց. կոկիկ հագցրեց, և մեռք կրկին քայլեցինք դեպի իմ կյանքի ճորոգ սկսյալ մպատակակետ՝ հոգու պայծառացման և ձևավորման առաջին կերտարան՝ երաժշտական կրթօջախ: Ես իմ ձեռքին ունեի, և կրում էի հպարտորեն, մի հնգատող նոտատետր և մատիտ:

Երբ տանից դուրս եկամք և, երկրորդ անգամ լինելով, քայլեցինք դեպի երաժշտական դպրոց, տատս մախ Սև շուկայի ետևի մեղիկ փողոցի վրա գտնվող տուն-կրպակից իմն համար մի ափաչափ կոզհնախ զնեց, որը ես շատ էի սիրում, և շարունակեցինք ճամապարհը: Բաղաքն իմն թվում էր հեքիաթային: Այն մեղիկ փողոցները, որով մեռք անցնում էինք, իմն թվում էին աշխարհի

ամենաընդարձակ և բարեկարգ փողոցները, իսկ Գետառն արդեն՝ աշխարհի ամենամեծ և ջրառատ գետը: Սակայն իրականում բոլորովին էլ այդպես չէր: Այդ բոլոր հրաշապատում պատկերացումները լոկ իմ մանկական ամփոքձ, ամհանաչելի երևակայության և պատրանքի արդյունք էր: Իրականում մեր անցնելիք փողոցներն ամհրապույր, փոշառատ, հողառատ, աղքատատ ճանապարհներ էին, որոնք շրջապատված էին կիսախարխուլ տներով, որոնցից շատերի պատերին դրված էին հեծնայուններ՝ փլուզումից ապահովելու համար: Տները բացառապես հողածածկ էին, որոնք անձրևային օրերին գերծ չէին կաթոցներից: Իսկ ձմռան ամիսներին բոլոր տնատերերը հաճախակի բարձրանում էին տանիք և իրենց լայնաշեղք թիակներով մաքրում այն ձնե ծածկույթից: Իսկ Գետառը, որ ինձ թվում էր ամազմադղորդ հոսող մի ահռելի գետ, իրականում աղքատատ, աղքատար մի, այսպես ասած, ջրատար առվակ էր, որի «առափնյա ճանապարհները» մարդկանց համար կարծես մի կերպ անցնելիք հնարավորություն էին, ասում են՝ մի կերպ, որովհետև եթե մի փոքր անուշադիր լիներ քայլողը, ապա շատ հավանաբար կսայթաքեր և կընկներ նրա մեջ:

Ես ժամանակներ անց միայն կռահեցի և հասկացա, թե ինչու էր քաղաքն ինձ այդպես հեքիաթային հրաշք թվում: Հավանաբար օրվա իրադարձային խորհուրդն էր ստիպել ինձ, որ ես շրջապատը տեսնեմ գունազարդ՝ շողշողացող պայծառ գույներով:

Սակայն, ինչևհիցե, իմ այս մանկական երևակայությանը բնորոշ երազային իրողության տպավորություններն իրականում բոլորովին էլ այդպիսին չէին: Սակայն մի բան հստակ էր և անձխտելի, որ այդ անհրապույր, անբարետես, մարդու կենսագոյության զավեշտ հանդիսացող այդ շրջապատը ինձ համար դեպի ապագա տանող առաջին և նախնական լուսաշող ուղին էր:

Երբ տեղ հասանք և ներս մտանք շքամուտքից, միջանցքում արդեն աշխույժ եռուզեռ էր: Միջանցքում էր նաև քննական հանձնաժողովի նախագահը՝ այն պատկառագոյու, քիչ գիրպլուն տղամարդը: Պարզվեց, որ նա այս ուսումնական հաստատության տնօրենն է, Հայաստանում ճանաչված երաժիշտ-երգահան Մարտին Մազմանյանը: Նա, կարծես յուրատեսակ տարերքի մեջ, աշխուժորեն շրջում էր միջանցքում և հանձնարարություններ տալիս մանկավարժներին: Ես ամուր կերպով բռնել էի տատիս ձեռքից և չէի համարձակվում թողնել այն:

Միջանցքում եռուզեռը հանդարտվեց միայն այն ժամանակ, երբ տնօրենի կարգադրությամբ նախապատրաստական դասարանի երեխաներիս և հիմնական աշակերտներիս տեղաբաշխեցին դասարանների վրա: Առաջիններիս, որ կլինեինք շուրջ քսան հոգի, սիրունատես երիտասարդ մի կին մանկավարժ առաջնորդեց դասարան, որտեղ կային աշակերտական տասը նստարաններ, որոնց առջևի կենտրոնական մասում կար մի համեստ սեղան՝ իր աթոռով: Ընկատային մասում տեղադրված էր մի հսկայական պտտվող գրատախտակ, որի մի երեսը ճիշտ և ճիշտ նման էր նոտատետրի, իսկ մյուս երեսը հարթ էր ու մաքուր:

Դասարանն արտասովոր լուսավորվել էր երկու մեծ և ընդարձակ պատուհաններից ներս թափանցող Արևի լուսաշող ճառագայթներից: Մեզ՝ երեխաներիս հետ էին նաև մեր ծնողները: Մանկավարժ կինը մեզ տեղաբաշխեց

նստարաններին: Երբ ամեն շարժում վերջացավ, քիչ անց մերս մտավ դպրոցի տնօրենը, մտնեցավ և կանգնեց մանկավարժի մոտ ու դիմեց մեզ.

- Հարգելի ծնողներ, սիրելի իմ երեխաներ, ես համոզված եմ, և դա անտարակույս այդպես է, որ այս օրը ձեզ համար ամըմբռնելիորեն անհավանական, բայց և հաճելիորեն արտասովոր հանդիսավոր օր է: Դուք ամառարկելիորեն մե՞ծ սպասումով եք մուտք գործել այս հաստատություն, մի շենք, մի սուրբ տաճար, որտեղ կերտվելու են ձեր այս փոքրիկ արարածների անաղարտ ու շինջ հոգիների դեռևս չձևավորված ներաշխարհը: Ես անկեղծորեն և համակ սրտով ողջունում եմ ձեր այս քայլը: Երաժշտական աշխարհն այն անըմբռնելի, անընդգրկելի տիեզերքն է, որտեղ մուտք գործելով՝ մարդու հոգին բյուրեղանում է, վսեմանում, վեհանում և դառնում ամենաբովանդակ: Իմ անձնական հորդորն է՝ հենց այսօր իսկ, հենց այս պահից, առանց դույզմ իսկ ուշացումի, սկսեք ձեր քայլերը՝ համարձակորեն, անվարան և հեռանկարային մեծ սպասումով լի՝ հիրակամացում ձեր աստվածապարզ և բոլոր առաքինի ձգտումների:

Ողջույմի և հորդոր-մաղթանքի խոսքից հետո, տնօրենը, մատմացույց անելով կողքիմ կանգնած կնոջը, շարունակեց.

- Որպես ուղեցույց, ձեր առաջին քայլերին կաջակցի և դեպի հետագա ընթացք կառաջնորդի այս հաճելի և բոլորիս կողմից հարգված ուսուցչուհին՝ տիկին Մկրտչյանը: Սիրեցեք նրան և եղեք ուշիմ ու լսող: Բարին ընդ ձեզ:

Այս ասելով, տնօրենը դուրս գնաց:

Մեր՝ երեխաներիս առաջին ուսուցչուհին՝ տիկին Մկրտչյանը, այնուհետև մի քանի հանձնարարականներ տվեց մեր ծնողներին, և այդպիսով երաժշտական դպրոցի այդ օրվա առաքելությունն ավարտվեց:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 08.20-ին, ես և Սաթեմիկ տատս գտնվում էինք երաժշտական դպրոցի միջանցքում, մեր դասարանի մուտքի առջև: Այնտեղ էին հավաքվել նաև մյուս երեխաները՝ իրենց ծնողների հետ: Բիչ անց մտնեցավ ուսուցչուհի տիկին Մկրտչյանը և մեզ՝ երեխաներիս առաջնորդեց դասարան: Ծնողները մնացին միջանցքում, որտեղ տեղադրված էին երկա՛ր նստարաններ:

Երբ մենք մերս մտանք և տեղավորվեցինք աշակերտական նստարաններին, տիկին Մկրտչյանը մեկ առ մեկ մտնեցավ մեզ, շոյեց մեր գլուխները, փաղաքշահեցավ ծանոթացավ մեր աճումներին և այնուհետև գնաց իր տեղը, բաց արեց դասամատյանը, մեկ առ մեկ ստուգեց բոլորիս ներկայությունը և սկսեց խոսել.

- Սիրելի երեխաներ, այս պահից դուք համարվում եք այս դպրոցի՝ այս երաժշտական կրթական հաստատության սաները՝ աշակերտները: Այդ բանի համար դուք ամսահամարներն պետք է հպարտ լինեք և ամենակարևորը՝ դասերի ընթացքում լինեք չափազանց ուշադիր, ուշիմ և հանձնարարությունների մկատմամբ՝ ջանադիր և պարտաճամաչ: Դուք այստեղ պետք է ստանաք երաժշտական կրթություն, բայց մինչ ձեր ընտրած երաժշտական գործիքի վրա սովորելը, դուք պետք է հետևանք մասն երաժշտական այբուբենի՝ մոտաներին, և ազատ կերպով ընթերցեք այն: Իսկ դրա համար հենց այսօրվանից դուք պետք է սովորեք նրա ընթերցումը: Ուսումնական սույն առարկան, որի դասավանդումը կսկսենք այսօրվանից, կոչվում է «սոլֆեջիո»: Հենց այս ուսումնական առարկան էլ ձեզ համար կհամդիսամա ուղեցույց երաժշտական այբուբենի ընթերցմանը:

միշտ է, մենք՝ հայերս, դարեր առաջ ունեցել ենք մեր սեփական, ազգային խազագրությունը՝ խազերը, քայց այն վաղուց անտի սոցալոգոյան է մատնվել և այժմ կիրառոյան մեջ է ելրոպական մոտազրոյումը, որի կիրառոյումը ման ընդունում է համայն աշխարհը: Դուք հենց այսօր, այս պահից պետք է սկսեք մրան տիրապետելու աշխատանքները: Եվ այսպես ...

Տիկին Մկրտչանը շրջվեց, մտեցալ գրատախտակիւ, վերցրեց կալիճը և առաջին հնգատողի տակ, ձախ կողմի սկզբնամատում, մի փոքրիկ հորիզոնական գիծ քաշեց, վրան համարյա նույնաչափ շրջանակ գծեց, վերին մասից մրան միացրեց մի ուղղահայաց երկար պոչ, որը հատեց հիմզ տողերից մերքևի երկուսը, և ասաց.

- Երաժշտական այրութեմի առաջին միշը «դո»-ն է: Ահա այն:

Եվ այսպես, այս «դո»-ից էլ սկսվեց մեր ուսումնառոյան տարեշրջանը:

Չգիտեմ, թե այդ օրը քանի՞ դասաժամ ունեցանք, միայն հիշում եմ, երբ մենք այդ օրը դասերն ալարտեցիմք և դուրս եկանք միջանցք, տատու անհամբեր, անհամգիստ իմձ էր սպասում: Ես սրտի անհուն թրթիռով, կարոտակեզ վազեցի մրա մոտ և փաթաթվեցի մրան: Սաթեմիկ տատու մեզ համար արտասուվոր օրվա իր հոգու քերկրանքն այսպես արտահայտեց.

- Փառքդ շա՛տ, Տե՛ր...

Տարիներ անց միայն ես գիտակցեցի և հասկացա, թե իմ խեղճ, անձնորաց, մվիրյալ Սաթեմիկ տատու որքա՛ն տառապալից օրեր ապրեց իմձ հետ՝ սկզբնական տարիներին իմ ուսումնառոյան դասաժամերն անցկացնելով երաժշտական դպրոցի միջանցքում, հենց այդ չո՛ր ու ցամաք երկա՛ր մատարաններին...

Թող օրհնյա՛լ լինի մրա հիշատակը: